

պատուութեան⁽¹⁰⁴⁾:

Եթե համասեռականութիւնը, օրինակ Հնադարեան ժամանակներուն, Յունաստանի մէջ ընդունուած եւ շատ սովորական երեւոյթ էր, քրիստոնեայ Միջնադարուն, սակայն, Եւրոպայի մէջ, համասեռականութիւնը կը նկատուէր «անբնական», այլասերուած, արգիլուած, դատապարտելի եւ նոյնիսկ մահապատժի արժանի երեւոյթ եւ կը դասուէր մեղքերու շարքին: Միջնադարու այս դիրքաւորումը կը շարունակուէր նաեւ Անցման ու Նոր Դարաշրջանին, սակայն մահապատժի փոխարէն, համասեռականներ կը բանտարկուէին ու կ'ենթարկուէին ծայրայեղ խտրականութեան եւ զանազան հարկադրական պատժամիջոցներու:

Գերմանիոյ մէջ, օրինակ, 1872 թուականի սկիզբը, քրեական օրինագրքին (գերմ.՝ StGB) մէջ կը հաստատուէր § 175 հատուածը, ուր բանտարկութեամբ պետք է պատժուէին համասեռականները: Միայն 1969 թուականէն սկսեալ Գերմանիոյ մէջ սկսաւ մեղմանալ այս օրէնքին իրագործումը եւ 1994-ին, այդ հատուածը վերջնականապէս ջնջուեցաւ օրինագրքէն:

Բժշկագիտական-հոգեբանական տեսանկիւնէն, մինչեւ 20-րդ դարու առաջին կիսուն, համասեռականութիւնը կը նկատուէր խիստ այլասերուած, «ոչ-բնական» ու հիւանդագին երեւոյթ: 20-րդ դարու երկրորդ կիսուն, անցեալի այդ ծայրայեղ դիրքաւորումը կը մեղմանար եւ համասեռականութիւնը, ինչպէս նաեւ սեռական կարգ մը այլ տարբերակները, կը նկատուէին միայն՝ **սեռական շեղումներ** (Sexual Deviation):

Այսօր, 21-րդ դարու սեմին, համասեռականութիւնը, գոնէ բժշկագիտական ու հոգեբանական տեսանկիւնէն՝ անբնական երեւոյթ մը չի նկատուիր, այլ՝ սեռական յարաբերութեան տարբերակ: Այսուհանդերձ կարգ մը երկիրներու մէջ համասեռականները տակաւին կը հալածուին ու զանազան պատժամիջոցներու կ'ենթարկուին, նոյնիսկ՝ մահուան կը դատապարտուին:

Կան նաեւ երկիրներ, ուր համասեռականութիւնը բնական երեւոյթ մըն է: Օրինակ Գերմանիոյ մէջ, 2001 թուականէն սկսեալ, համասեռականներ, այդ եւ կնոջ ամուսնական միութեան նման, երկու այրեր կամ երկու կիներ «կեանքի ընկերակցութիւն» (Partnership) մը կրնան պաշտօնապէս կնքել, արձանագրել տալ եւ օգտուիլ ընկերակցութեան ընձեռած օրինական առաւելութիւններէն, որոնք նման են այր-կին ամուսնական միութեան օրինական առաւելութիւններու: Ապա, 2017 թուականէն սկսեալ նաեւ արտօնուեցան *համասեռական ամուսնութիւնները* (անգլ.՝ Same-sex Marriage, գերմ.՝ Gleichgeschlechtliche Ehe): Աշխարհի վրայ կան 29 երկիրներ, ուր *համասեռական ամուսնութիւններ* կը կնքուին:

Սեռական այլ հարցեր

(104) **Արժանապատուութիւն** (անգլ.՝ Dignity, գերմ.՝ Ehre) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 406: